



9. ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Կնիկմ՝ իրիկ մի կեղնին: Էտ իրիկ մայարի տեր կ'եղնի: Էտ մարթ կիմա
օր պարտքընտեր է: Պարտքընտեր կիգա զինք քաշե տանի: Կ'էլնի քառ-
սուն մատ թարանջա կը շինա, զուր կնիկ կը դնա մեջ, բալնիք կը զարկե
մեջք, կերթա չարշին:

Օրերուց օր մի բալնիք կը մոռնա սենյակի մեջ: Էդ պարտքընտեր
կիգա դուռ կը բանա, ձեռ կը թալա կնիկ, կըսե. - Արի, երթանք իմ պարտքի
տեղ:

Երկու մատ թարանջա իջավ, լաց, աղեն արտասունք թափեց, ըսավ.
- Բոզ ձիավոր Սուրբ Սարգիս, ընծի ազատես դուշմնից, իմ փորուն տղա է՝
տամ քի, ախչիկ է՝տամ քե, օ՜ֆ չէնիմ:

Ըսավ. - Մարթ, դու ընկի հառեջ, ես կընկնիմ հետեւ, դու մարթ ես:

Ձեռ էտու դուշմնի պառեկ, փրթավ, քառսուն թարանջա ինկավ տակ,
մեռավ, էղավ լոշ, կպավ վըր սալերուն:

Էլավ իրիկուն, իրիկն էկավ տուն:

Ըսավ. - Սուրբ Սարգիս մըզի մըր դուշմենն ազատիր: Է՛, մենք ի՞նչ
պտի տանք Սուրբ Սարգսին:

Ինն ամիս օր ընցավ, կնիկ պառկավ, բերեց ախչիկ մի:

Մնաց յոթ տարին թմավ, Սուրբ Սարգիս էկավ օր մի:

Ըսեց. - Պապե, էրե քե խալավ տամ:

Ձեն չէրեց:

- Պապե, էրե քե փարա տամ:

Ձեն չէրեց:

Վիրուց ըսեց. - Կի՛ն, դու քո խոսքի տերն ե՛ս:

- Վո՛ւյ, - ըսեց, - Սուրբ Սարգիս, դո՞ւ ես:

- Հա, - ես իմ խոսքի տերն իմ, ահա իմ ախշիկ: Թու՜նդիր վառեմ, թա՜լես հիմնե՛ ձեն չենիմ: Օտներ բռնես, գլոխ կտրես՝ ես ձեն չենիմ, քու հառեց արտասու՜նք չթափեմ, դու զիս իմ նայարից ազատեր ես:

Ըսավ. - Լաո՛, նա կը մորթեմ, նա կը քրթեմ, Աստծուց կը խնդրեմ՝ լա՛ օսկի ու արծաթ թափի, ծո՛ղա՝ վա՛րթ ու ռիյա՛ն բացվի:

Սըբ Սարգիս խամբարծավ: Գնացին թագավորին ըսին.

- Աստված բարութե մի ստեղծիր է, քու սարին է լայեղ, գնա՛ բեր քու սարին:

Թակավոր մտածեց, ըսեց. - Իմ գլխի ուռավ, էտ ի՞նչ բան էր: Հիսնից հիսան էղնի, լա՛ արծաթ, օսկի թափի, ծո՛ղա՝ վա՛րթ ու ռիյա՛ն բացվի, էտմալ լսե՛ր եք:

Էլավ թակավոր նստավ ֆայթոն, էկավ ախշկե տեսութեմ: Էտ թակավոր ալմաստ փուլախ քաշեց, կայնավ ախշկա վրեն, չլոտ մի զարկեց, խըտ լա՛լ ու արտասու՜նք թափեց՝ օսկին ու արծաթ դիզվան վրեն:

Թակավոր. - Ո՛ր աչաք քբարներուն, առաջի ցուցանք մի բերեք, օր ախշիկ իշկա, ծո՛ղա:

Էտ ցուցանք օր բերին, ախշկե աչք առավ հիմե, ծիծղաց:

Խըտ ծո՛ղալու՜ն վարթ ու ռիյա՛ն բացվավ պատին:

Ախշկե խարսնիք բռնեցին, թակավոր կը տանի ուր տղին: Էտ ախշկան մարթ չըկեր աղոբաբ*.

Էրթեր խետ: Ախշկան մորթուր էլավ քնաց խետ, բայրա՛նուկ: Էտ մորթորոջ գեշատես ախշիկ մը կեր: Ձետ ախշիկ ուր տուն թաքլիֆ: Կերցուց չոր միս ու շոր պռվածք, քալամ: Սաբախտան մորթուր էլավ զուր գեշատես ախշկան ձեռ պոնեց, թալեց ֆայթոն ու գացին: Տասերկու սիսթեն ճամբախ գացին, ախշիկ ծարվցավ:

Ըսավ. - Մորթո՛ւր, պուտ մը ջուր տաս, ես խմեմ, իմ իմամ** փախավ:

Ըսավ. - Սեվավո՛ր, էտեղ ջուր աչքով կիտան: Վոն օր ուր աչք խանեց էտու, ջուր էնոր կիտան:

Քիչ մի լա դեն գացին, ախշիկ շատ ծարվցավ, աչք մի խանեց, էտու՝ պուտ մը ջուր առավ խմեց:

Փշու՛մ՝ էլ դեն գացին, ըսեց. - Մորթո՛ւր, զիմ մեկ աչքն էլա հան, ջուր տուր խմեմ:

* Բանահավաքը բառի բացատրությունը չի տվել (ծ.կ.):

** Բանահավաքը այս բառից հետո տեղ է բաց թողել՝ բացատրելու համար (ծ.կ.):

Ձէն մեկ աչքն էլա հանին, էղալ անիլ: Ձէտ ախչկա ջաջայի հալվներ խանեց վըր ուր ախչկան, գկոր ախչիկ թալեց մըչ պրակին ու գնաց:

Թակավորի տղեն գխարս տեսալ, հիրկուն էր:

Տեսալ մեկ աջբատես, արաբու աբոռչ, էկե կայնե սենյակի մեջ:

Թակավորի տղեն օր գէտի տեսալ, թարկա դնե էղալ ու կորալ գնաց:

Դանճանք վըր պրակի ախչկան:

Խալիվոր մի ինկե քոռեր կը ժողվա, տանի կենա ուր խոգուն:

Էտ խալիվոր առալ գէտ վեց քոռ, էկալ էտ պրակի մեջ չըռփի կժողվա, տանի վառա:

Էտ վեց խատ անիլ գացին պատան վըր էտ ախչկա ջանդկին, բռռացին. - Պապե՛, - ըսին, - արե, ջանդակ մի գտեր ենք. քոռ ա՛ չգինանք, սաղ ա՛ չգինանք:

Պապեն էկալ գէտ ջանդակ շիթեց, գրկեց, տեսալ օր անիլ է:

Պապեն ըսալ. - Փառք Տիրոջ, վեցն են, էղան յոթ, կսմաթ խասոցող Աստվածն է:

Ախչիկ լաց՝ խըտ լացուն Աստծու սուրբ օղորմութեն թնփալ՝ օսկի, արծաթ թնփալ: Օր ծծղաց՝ վարթ ու ռիյան բացվալ: Ըսեց. - Պապե՛, ես լացի, ի՞մալ էղալ:

Ըսեց. - Լառ, դու օր լացիր՝ օսկի, արծաթ թափալ, դու օր ծծղացիր՝ վարդ ու ռիյան բացվալ:

Շալկեց պապեն գէտ ախչիկ, բերեց ուր տուն: Խալիվորուն ըսալ. - Դաստե մի էդ վարթեն քաղա, մեկ ռիյանեն, դունեն լե տան՝ չի տաս, էրկու աչք տան, առ բեր:

Գնաց տարալ վարթ ու ռիյան, տարալ էտ քաղքի մեջ, օր արաբու ապոռչ տարած ի. էլալ դեմ գնաց, կանալ թակավորի ապոռչի դուռ:

Ապոռչ ըսալ. - Պապե, էտ խորոտիկ վարթ ու ռիյան ինչո՞վ կիտաս:

Ըսալ. - Լառ՛, աչքով կիտամ:

Արաբու ապոռչ ըսեց. - Պապե՛, էրկու աչք կա իմ մամու ջեր, էրթամ բերեմ տամ:

Գնաց բերեց: Ձէտ էրկու աչքն էտուր ու պառալ գէտ վարթն ու ռիյան շարեց սենյակի պատեր:

Ըսալ. - Թակավորի տղա՛, դու ըսիր՝ ծծղաս, վարթ ու ռիյան չբացվիր, տես ի՞մալ վարթ ու ռիյան է բացվեր պատեր:

Պապեն առավ գետ երկու աջք, բերեց դրեց ախչկա ձեռ: Ախչիկ զաջքերն առավ եղիր ուր աչիչ բներ. դաստե մի վարթ, մեկ ոխյան առավ քսեց վրեն, մեկ լուս եղավ տաս:

Էտ ապոռոշի մամ օր էկավ տեսավ եղ վարթ ու ոխյան, ըսավ. - Դու պառկի խիվանդ:

Էլան ըսին. - Ի՞նչ կուտե թակավորի խարս:

Ըսավ. - Վերու միս կուտե:

Էլան զավջիք ճամբեցին սար: Վերու էժ բռնեցին բերին ավջիք: Բերին դրին գետին, մորթեցին, մամ խասավ, զուլունկներն առավ, կապեց ախչկա վիզ:

Պապե տան ախչիկն մեռավ: Էտ ախչկե սեյրին վերու էժի զլիխն է. օր զհըլուն առավ, կապեց ուր ախչկա վիզ, պապե տան ախչիկ մեռավ:

Պապեն ըսեց. - Ի՞նչու զախչիկ պտի տանիմ խորեմ, էնքան ամակ թողեց մըչ իմ տան:

Պապեն գնաց Բաղեշու քաղաք, ձեռք մի թակավորական ջազայիր շոր կտրեց, հագուց ախչկան, սառու մի լաչի թալեց վըր զլիսուն, շալկեց տարավ թալեց հեր ու էկավ:

Թակավորի տղեն ուր քրթոն ավջութին կենա, ծին խեժավ, ընկավ սարեր: Էտ ավջին էկավ մտավ հեր: Տեսավ օր խրեղեն հուրի մալաք քուլ-ֆաթ մի հանդե պառկուկ է: Գրկեց՝ մեռուկ, շտկեց մեռուկ: Պագեց՝ մեռուկ: Էլավ զուր մեղք գործեց խըտ էտոր ու թողեց գնաց:

Ին տարին, ին օր օր թըմավ, մեռուկ տեղ պառկավ ու երեխե մի բերեց:

Իրեք տարին օր թըմավ, թակավորի տղեն էլավ էկավ էտ հերի դուռ: Տեսավ օր անդալատ քոռփե մի կը խաղա խըտ խողի փլին: Էտ թակավորի տղի շուքն օր տեսավ, վագեց ուր մեռուկ մոր ծիծն առավ բերան, կծծե:

Թակավորի տղեն խասավ գրկեց գետ կնիկ՝ մեռուկ, շտկեց՝ մեռուկ, պագեց՝ մեռուկ: «Ջանը՞մ,- ըսեց,- էտի իմ մեղքն է»: Վերուց գտղեն, գրկեց ըսավ՝ տանիմ պայիմ:

Գրկեց տարավ ուր մամուն ըսեց. - Սուլթան, էտ երեխեն խըտ դոռ մի կ'էրթեր, բռնեցի բերի պայիս, չթողես արաբու ապոռոշ գտղին կընմթե, զարկե:

Ութ, ին օր երեխեն մնաց մըչ ուրանց: Թակավորի սուլթան ուր տղին ըսեց. - Դավուդ ասլան, վերու տար զերեխեն դոր տեսար, դիր էնտեղ, մայամ օր գտղեն կխեղդա արաբու ապոռոշ:

Թակավորի տղեն էն մեկ օր դսեն էկավ, տեսավ օր արօթու ապռոշ վերուց տղեն գրկեց: Էրեխեն ձեռ թալեց վզի հըլուն կտրեց, մնաց ուր ձեռ:

Մամն ըսեց. - Դավուդ ասլան, առ զտղեն, գնա, մայամ օր ուլընկենբու հապով զտղեն կը խեղդա:

Էլավ զտղեն գրկեց տարավ էդիր հերի դուռ ու զինք պաղկվըցուց, կանավ:

Էտ էրեխեն գնաց, մամու ծիծն առավ բերան ծծեց, մեռուկ տեղ: Տղի ձեռ բացվավ, հըլուն պատավ մամու սոտի վրեն, մամ սաղցավ, էլավ նստավ: Մամն օր լնց՝ օսկին ու արծաթ թափավ: Մամն օր ծծղաց՝ վանթն ու ռիյան պատավ հերի պատեր:

Թակավորի տղեն գնաց, զինք թալեց կնկա օտաց:

Ըսավ. - Ես զիշերով կպտտտե, դու ցերեկով ընկար իմ ձեռ: Շամդին կարողաշ դու մացիր հողի, ես կ'երթամ թակավորի մոտ:

Էլնվ չորս խարիր խատ սիվտակ մուրուս ժողվեց, զանօթու ապռոշ կապեց ծիաներու պոչ, թորկեց՝ գացին սար, հիրիկվան առան զժամերն էկան:

Իրեք խարիր սիվտակ մուրուս ժողվեց, նոր գնաց զՇամդին կարողաշ առավ էկավ տուն:

Էն խասավ ուր մուրազին, դու էլ քոն:

